



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19234

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի փետրվարի 18-ի թիվ 53-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/49-Ա**

ՓԱՏՏԱՔԱՆ ԱՐԹՈՒՐ ԱԼԻԽԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Ալիխանյանին (արտոնագիր թիվ 404) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետի պաշտոնակատարը (**այսուհետ՝ նաև Դիմող**) դիմելով ՀՀ փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**) հայտնել է հետևյալը.

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում քննվող թիվ 46154519 քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված Արման և Արքա Մադաթյանների, ինչպես նաև Վահան Իսահակյանի պաշտպան է հանդիսացել փաստաբան Արթուր Ալիխանյանը: Արթուր Ալիխանյանը քննչական խմբի ղեկավարի կողմից ծանուցվել է այն մասին, որ տվյալ քրեական գործի նախաքննությունը գտնվում է ավարտական փուլում:

16.09.2019թ. Արթուր Ալիխանյանը ծանուցվել է այն մասին, որ հրավիրվում է ներկայանալ վարույթն իրականացնող մարմին, որպեսզի քրեական գործով հայտնվի նախաքննության ավարտ և ծանոթանա գործի նյութերին, անհրաժեշտության դեպքում հանդես գա միջնորդություններով: Դիմողը պնդում է, որ չնայած դրան փաստաբանը անհարկի, տարբեր չհիմնավորված պատճառաբանություններով չի ներկայացել վարույթն իրականացնող մարմին: Ավելին՝ 19.09.2019թ. առավոտյան փաստաբանին առձեռն համապատասխան

ծանուցագիր է ներկայացվել, սակայն վերջինս հրաժարվել է ստանալ ծանուցագիրը՝ չպատճառաբանելով իր այդ որոշումը:

Ըստ Դիմողի՝ նախաքննությունն անհարկի ձգձգվում է փաստաբան Արթուր Ալիխանյանի անպատասխանատու վարքագծի պատճառով:

Դիմողը խնդրել է հնարավոր սեղմ ժամկետում քննարկել փաստաբան Արթուր Ալիխանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին իր դիմումը և արդյունքների մասին հայտնել իրեն:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 18.10.2019թ. թիվ 450-Ա/ԿԳ-19234 որոշմամբ փաստաբան Արթուր Ալիխանյանի (արտոնագիր թիվ 404) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 6.1.1 ենթակետի պահանջի խախտման հատկանիշներով:

22.10.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

01.10.2019 թվականին փաստաբան Արթուր Ալիխանյանը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում քննվող թիվ 46154519 քրեական գործով ներկայացնում է Արման և Արքա Մադաթյանների, ինչպես նաև Վահան Իսահակյանի շահերը: Այդ ընթացքում վերջինս պատշաճ կերպով կատարել է որպես պաշտպան իր պարտավորությունները, իր մասնակցությամբ կատարվել են մի շարք քննչական գործողություններ իր պաշտպանյալների նկատմամբ, փորձաքննություններ են նշանակվել, եզրակացություններ ստացվել, կալանքի միջնորդություններ և կալանքի երկարացման միջնորդություններ են ներկայացվել, որոնք վերջինիս կողմից բողոքարկվել են և կալանքի միջնորդությունների հետ կապված որևէ նիստ վերջինիս կողմից չի ձգձգվել:

Փաստաբանի պնդմամբ ինքը 2019 թվականի օգոստոսի վերջին նշված քրեական գործով վարույթն իրականացնող մարմնին՝ քննչական խմբի ղեկավար Գևորգ Գաբրիելյանին, և հսկող դատախազին՝ Ծովակ Մնացականյանին,

տեղեկացրել է, որ 2019 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև սեպտեմբերի 30-ը գտնվելու է տարեկան հերթական արձակուրդում և բացակայելու է Հայաստանի Հանրապետությունից: Փաստաբանը նաև հայտնել է, որ 2019 թվականի սեպտեմբերի 12-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի միջանցքում հանդիպել է գոծով քննիչին, ով առաջարկել է փաստաբանին հանդիպել հաջորդ օրը, սակայն նաև հավելել է, որ վերջնական պայմանավորվածության համար հավելյալ կզանգահարի: Փաստաբանը համաձայնել է, սակայն խնդրել, որ այդուհետ նախապես՝ գոնե հանդիպումներից մեկ օր առաջ իրեն տեղեկացնեն: Քննիչն այդպես էլ չի զանգահարել ուրբաթ օրվա համար, սակայն զանգել է կիրակի օրը և պայմանավորվել են հանդիպել 18.09.2019 թվականին: Այնուհետև 17.09.2019 թվականին փաստաբանի նախաձեռնությամբ հանդիպումը տեղափոխվել է հաջորդ օրը ժամը 09:00-ին, սակայն այս անգամ էլ քննիչը զանգահարել է երեկոյան և հայտնել, որ առավոտյան ժամն իրեն հարմար չէ և խնդրել է տեղափոխել հանդիպման ժամը օրվա երկրորդ կեսին՝ 14:00-ին, նախաքննության ավարտ հայտնելու համար: Փաստաբանն առարկել է ու ասել, որ այդ ժամն իրեն հարմար չէ, նաև հավելել է, որ տվյալ գործով երբևէ պատշաճ ծանուցված չի եղել և խնդրել, որ այդուհետ իրեն փոստով ծանուցեն, նմանատիպ իրավիճակներից խուսափելու համար:

Հետագայում Փաստաբանը գնացել է Արմավիր ՔԿՀ սպասելով, որ քննիչ Գաբրիելյանը կներկայանա Արմավիր ՔԿՀ, պահելով նախնական պայմանավորվածությունը, սակայն վերջինս այդպես էլ չի եկել: Արմավիր ՔԿՀ-ից դուրս գալուց հետո ստուգել է մեքենայում թողած բջջային հեռախոսի զանգերն ու հաղորդագրությունները և տեսել, որ զանգեր է ստացել +37499250055 հեռախոսահամարից, իսկ ժամը 10:10 ընդհատելով հաղորդագրություն է ստացել, որ 2019 թվականի սեպտեմբերի 19-ին ժամը՝ 16:00-ին ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժին է հրավիրվում քրեական գործի նախաքննության ավարտին մասնակցելու և քրեական գործի նյութերին ծանոթանալու համար: Այդ հաղորդագրությունը վերջինս կարդացել է սեպտեմբերի 19-ին ժամը՝ 18:03-ին և պատասխան հաղորդագրություն է ներկայացրել քննիչին, որով հայտնել է, որ ինքը գտնվել է Արմավիր ՔԿ-ում, վերջինիս բացարկ է հայտնել և որ վերջինս իրավասու չէ որևէ գործողություն կատարել, բացի այդ հայտնել է, որ վերջինիս հաղորդագրությունը կարդացել է ժամը 18:03-ին: Փաստաբանը խնդրել է նախապես փոստով ծանուցագիր ուղարկել իրեն և հիշեցրել է, որ սեպտեմբերի 20-30-ը Հայաստանի Հանրապետությունում չի լինելու և խնդրել է այլևս հեռախոսին հաղորդագրություններ չուղարկել:

Փաստաբանի պնդմամբ քննիչ Գաբրիելյանը պատշաճ ծանուցում չի ապահովել:

Ելնելով վերոգրյալից, փաստաբանը խնդրել է ամբողջությամբ մերժել Դիմումը:

20.11.2019 թվականին ներկայացրած բացատրությամբ Պատասխանողը վերահաստատել է 01.10.2019 թվականին ներկայացրած իր դիրքորոշումը:

Պատասխանողը ներկայացել է Խորհրդի նիստին և ըստ էության հաստատել բացատրությամբ ներկայացված իր դիրքորոշումը:

Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

20.12.2019թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանը կազմել է եզրակացություն:

24.12.2019թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 18.02.2020թ ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Փաստաբան Արթուր Ալիխանյանը հանդիսացել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում քննվող թիվ 46154519 քրեական գործով մեղադրյալներ՝ Արման Մադաթյանի, Արքա Մադաթյանի և Վահան Իսահակյանի փաստաբանը:

- Փաստաբանը մասնակցել է գործով մի շարք քննչական գործողությունների, ներկայացրել է միջնորդություններ:

- Փաստաբանը ներկայացրել է միջնորդություն գործով քննիչին բացարկ հայտնելու վերաբերյալ:

- Փաստաբանը պատշաճ ծանուցված չի եղել այն քննչական գործողությունների մասին, որոնց չի ներկայացել:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արթուր Ալիխանյանը փաստաբան է հանդիսանում 02.04.2001թ-ից և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում

վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 18.10.2019թ. թիվ 450-Ա/ԿԳ-19234 որոշմամբ փաստաբան Արթուր Ալիխանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 6.1.1 ենթակետի համաձայն՝ *Վստահորդի շահերը մինչդարական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին:*

Նշված կանոնով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ մինչդատական վարույթում գործունեություն իրականացնել քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին համապատասխան: Փաստաբանը պարտավոր է պատշաճ կերպով ներկայացնել իր վստահորդների շահերը և միևնույն ժամանակ դրանք չհակադրել օրենսդրական պահանջներին:

Վերլուծելով նշված կանոնը և համադրելով այն գործում առկա փաստերի հետ Պալատի խորհուրդը գտնում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ փաստաբան Արթուր Ալիխանյանը որևէ կերպ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կամ Օրենքի պահանջները, ուստի վերջինիս վարքագիծը չի հակասում Կանոնագրքի 6.1.1 ենթակետի պահանջներին:

Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ Փաստաբանը պատշաճ ծանուցված լինելով քննչական գործողության մասին անհարգելի պատճառներով չի ներկայացել վարույթն իրականացնող մարմին: Պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանին պատշաճ ծանուցելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է դիմողը:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդը գտնում է, որ չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար, սույն կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 6.1.1 առաջին մասի 2-րդ ենթակետի, 7.2.5 (2) ենթակետի պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Արթուր Ալիսանյանի (արտոնագիր թիվ 404) նկատմամբ Կանոնագրքի 6.1.1 ենթակետի պահանջի խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-19234 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Հարություն Հարությունյան

**18 փետրվարի 2020թ.
թիվ ԿԳ/49-Ա
ք. Երևան**